

Թիւ 3598
Օգոստոս 14, 1958

Մեծայրդ
Տիար Կարդան Սթամպուլեան
Ատենապետ Միսական Խորհուրդի
Ս. Համբարձում Եկեղեցւոյ
Պրիւնսիպալ.

Յարգելի Պրն. Սթամպուլեան,

Այսու կը յայտնենք թէ Առաջնորդ Սրբազան Հօր յանձնարարու-
թեամբ Դիւանապետը Ապրիլ 24 թուականաւ Ձեզի յիշեցուցած էր, թէ ցարդ
Առաջնորդարան չէիք զրկած Ձեր ծխական տեղեկագիրը:

Տրուած ըլլալով որ տակաւին Առաջնորդարանիս չէք հայթայ-
թած այդ տեղեկագիրը, ներքակ Ձեզի կը զրկենք օրինակ մը որպէսզի լեց-
նելով իսկոյն վերադարձնէք, քանզի Թեմական Խորհուրդը պիտի ուզէ վի-
ճակիս եկեղեցիներու լրիւ վիճակացոյցը ներկայացնել յառաջիկայի Թեմա-
կան Պատգամաւորական ժողովին:

Լիայոյս ենք որ առաջին պատեհութեամբ կընդառաջէք Թեմա-
կան Խորհուրդի սոյն հրահանգին:

Մնամք սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԻՒՌՈՆ ՎՐԴ. ԿՐՃԻԿԵԱՆ
Առաջնորդական Փոխանորդ